

1178

151.7
—
V-18

1930

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՄԱՆԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա.Ռ.Ա.ՋԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՋԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ.

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՄԻՋԱՎԱՅՐ.

Առաջադրության
բովանդակու-
թյունը.

Ներկա առաջադրությունը նպատակ ունի պարզելու այն գործոնները, վորոնք վարում և վորոշում են որդանիզմի և մարդու ինքնությունը զարգացումը: Կուրսանուր պետք է պարզ ու վորոշ դադարաբար կազմի այն մասին, թե անձնավորության ձևավորման մեջ ժառանգականությունն ի՞նչ դեր է խաղում և ի՞նչ նշանակություն է վերապահված շրջապատող միջավայրին:

Ժառանգականության յեվ միջավայրի դերի մասին գույություն ունեցող տարբեր տեսակետներ.

Այն հաջքը, վորով մանկաբանությունը պիտի զրադվի առաջին հերթին, դա զարգացման գործոնների հարցն է. այսինքն՝ այն առաջ մզող ուժերի հարցը, վորոնք ղեկավարում են յերեխայի զարգացումը: Վարպես այդպիսին հանդիսանում են ժառանգականությունը (ներքին կենսաբանական գործոն) և շրջապատող միջավայրը (արտաքին գործոն): Նրանց մասին գոյություն ունեն հակադիր տեսակետներ:

Ենթվիվզը (ժառանգականության տեսություն) վճռողական նշանակություն և վերագրում տվյալ անհատի բնածին հատկություններին. այս տեսակետի կողմակիցները մատնանշում են իսթեր, յիր բնատուր ձիրքերն ու հակումները յերևան են գա-

75-57901 (2822)



լիս հակառակ այն բոլոր խոչընդոտներին, վորոնց ստեղծում է անհավաստ միջավայրը: Նույն իսկ հանցագործություն վրա նա-
տիվիզմը նայում է վորպես բնատուր որգանական հիմնական մի
հատկություն վրա և ընդունում է ժառանգաբար անցնող առան-
ձին հանցագործ տիպի գոյությունը:

Հակառակ տեսակետի վրա յն կանգնած եմպիրիզմը (эмпи-
ризм) (միջավայրի տեսություն), վորը բացասում է բնածին նա-
խադրյալները և մարդու անհատականությունն ամբողջապես հա-
մարում է միջավայրի արդյունք: Համաձայն այս տեսակետի,
մարդը ծնվելիս ներկայացնում է իրենից քլքի մի մաքուր բերք,
վորի վրա կարելի չե գրել, ինչ վոր ցանկանաս: Այս տեսություն
կողմնակիցները դաստիարակությունը համարում են ամենակա-
րող: Նրանց կարծիքով յերեխան փափուկ մեղրամոմ է, վորից
կարելի չե ուզածդ ձեռ կադապարել: Նրանք յենթադրում են, վոր
մարդկային ֆիզիկական և հոգեկան ընդունակություններն ի բնե
նման են իրար, նրանց տարբերությունն արդյունք է միայն
նրանց կյանքի տարբեր պայմանների:

Վերջապես գուգալցուրյան (конвергенция) տեսությունն ըն-
դունում է յերկու գործոնն ել—ժառանգականությունը և միջա-
վայրը և մարդկային ինքնությունը համարում է այդ յերկուսի
փոխադրեցություն արդյունք: Նույն տեսակետի վրա յն կանգ-
նած նաև խորհրդային մանկաբանությունը, միայն գերակշռող
դերը վերագրում է արտաքին միջավայրին:

Ծնորհիվ մարդկային բնության ծայրահեղ փոփոխականու-
թյան և մանկական որգանիզմի անսովոր ձկնություն, վորոշ մի-
ջավայրի յերկարատե ազդեցությունը ձևափոխում է նույն իսկ
անհատի կենսաբանական հատկությունները: Մանկական հաս կի
գոյություն պայմանները կարող են ընդմիշտ փոխել (դեպի լավը
կամ դեպի վատը) որգանիզմի կառուցվածքն ու գործունեյու-
թյունը: Այդ դեպքում միջավայրի ազդեցությունն ամենից առաջ
անդրադառնում է ներքին սեկրեցիայի գեղձերի գործունեյու-
թյան վրա:

Ժառանգականությունը, այսինքն ծը-
նողների հատկությունների փոխանցումն
բյուռն իրենց յերեխաներին, անվիճելի փաստ է:

Վարդը միշտ վարդից է սերվում, իսկ ձի-
յերը տալիս են ձիերի հաջորդող սերունդ: Դեռ ավելին, վորոշ
տեսակի վարդից կամ վորոշ ցեղի ձիուց առաջ են գալիս համա-
պատասխան տեսակներ կամ ցեղեր: Ծնողների հատկությունները
վերարտադրվում են իրենց յերեխաների մեջ: «Ուժը ծնվում է

ուժից, գեղեցկությունը՝ գեղեցկությունից» ասում է բանաստեղծ
Հորացիոն: Մարդն աշխարհ է գալիս վորոշ հատկություններով,
վորոնց փոփոխել հնարավոր է միայն վորոշ սահմաններում:

Յուրաքանչյուր անհատի թե մարմնական շինվածքը (конс-
титущия) և թե հոգեկան ընդունակությունները (որ. հիշողու-
թյան ուժը) ունեն փոփոխականության իր նց վորոշ սահմաննե-
րը և միջավայրի փոփոխող ազդեցության հանդեպ իրենց դիմա-
դրականության աստիճանը:

Ասացական
հասկումքում ների
փոխանցումը.

Արդյուր ծնողների բոլոր հատկություն-
ն յն են անցնում ժառանգականորեն:

Անհատների առանձնահատկություն-
ները լինում են կամ բնածին՝ ժառանգած
իրենց նախորդներից, կամ ստացական,
վորոնք ձեռք են բերել իրենց կյանքի ընթացքում: Բոլոր բնա-
ծին հատկությունները կարող են ժառանգաբար անցնել հաջորդ
սերնդին. իսկ ինչ վերաբերում է ստացական հատկություններին՝
նա դեռ չսպասված փճարանությունների նյութ է և մինչև որս
ել մի միասնական յեղրակացության չի հանգել:

Կամարկը յենթադրում եր, վոր՝ շնորհիվ կյանքի արտաքին
պայմանների փոփոխության, կենդանի եյակներն ել ձեռք են բե-
րում նոր սովորություններ, վորոնք իրենց հերթին փոփոխում
են առանձին գործարանները (նրանց գործ ածելու կամ չըգործա-
ծելու հետևանքով) և բոլոր այդ փոփոխությունները, թե կյանքի
սովորությունների և թե գործարանների, ժառանգաբար անցնում
են սերնդից սերունդ: Ընդհակառակը, Վեյսմանը պաշտպանում եր
այն տեսակետը, վոր ծնողների այն առանձնահատկությունները,
վորոնց նրանք ձեռք են բերել իրենց անհատական կյանքի ըն-
թացքում, ժառանգաբար չեն անցնում հաջորդ սերնդին: Վեյս-
մանը կարել է մկների 22 իրար հաջորդող սերնդների պոչերը,
բայց և վնչ մի սերունդ չի տվել կարճ պոչով մկներ:

Կարելի չե մի շարք փաստեր բերել, վորոնք վկայում են,
վոր նոր ձեռք բերված հատկությունները, վորոնք առաջանում
են շնորհիվ արտաքին խեղաթյուրող ազդակների, չեն անցնում
հաջորդ սերնդին:

Չնայած, վոր հրեյանների մոտ յերկար ու ձիգ սերունդների
ընթացքում գոյություն ունի թլփատման, չինացի կանանց մոտ՝
արհեստականորեն վոսքը փոքրացնելու, իսկ մի քանի խափշիկ
ցեղերի մոտ՝ առամները սղոցելու արարողությունները, բայց և
այնպես այդ բազմադարյան սովորությունները վոչ մի ազդեցու-
թյուն չեն ունեցել հաջորդ սերնդների վրա:

Հավասարապես չեն ժառանգվում նաև այն սովորությունները, վորոնց ծնողները ձեռք են բերել շնորհիվ վորոշ վարժությունների: Յեթե, որինակ, հայրը վորոշ վարժությունների շնորհիվ զարգացրել է իր մկանները կամ հիմնավորապես ուսումնասիրել է մի քանի լեզուներ, ապա նրա յերեխաները չեն ծնվում ուժեղ մկաններով կամ այդ լեզուներն ուսումնասիրելու աչքի ընկնող մեծ ընդունակություններով:

Ի միջի այլոց, մի քանի գիտնականներ այն կարծիքին են, վոր ծնողների ձեռք բերած սովորությունները նպաստում են նրանց յերեխաների մեջ նման սովորությունների արագ և հեշտությամբ առաջ գալուն: Հայտնի բնախոս ակադեմիկ Պավլովի լաբորատորիայում տեղի էլին ունենում մկների մեջ վորոշ սովորություններ առաջ բերելու փորձեր:—Նրանց վարժեցնում էին զանգը տալուն պես զալ կերակրվելու տեղը: Առաջի սերնդի մեջ այդ սովորությունը մոցնելու համար հարկավոր յեղավ մոտ 300 վարժություն, յերկրորդ սերնդի համար՝ միայն 100 վարժ., յերրորդ սերնդի համար՝ 30 վարժություն, չորրորդի՝ 10 վարժ., հինգերորդի՝ 5 վարժ.: Բայց նման փորձերի հաջորդ կրկնությունները նույն հետևանքները չտվին և ստացական սովորությունների ժառանգականության խնդիրը մնում է դեռ չլուծված: Շատ գիտնականներ այն կարծիքին են, վոր ստացական սովորություններից հաջորդ սերնդին են անցնում միայն նրանք, վորոնք անդրադառնում են սեռական բջիջների վրա, վորովհետև հենց վերջիններս են հանդիսանում ժառանգականության փոխանցման նյութական միջոցները:

Մենդելիի օրենքը. Ծնողների սեռական բջիջները, վորոնց միացումից սկիզբն է առնում նոր օրգանիզմը, հանդիսանում են ժառանգական բազմաթիվ և բազմատեսակ հատկություններ կրողները: Փաստորեն ժառանգականության կրողը հանդիսանում է սեռական բջիջների խրոմատինը (хроматин): Խրոմատինի մասնիկների միացումից գոյանում են այսպես կոչված խրոմոզոմներ (хромозомы — խրոմատինի մասնիկներ):

Խրոմոզոմների քանակը կենդանիների և բույսերի յուրաքանչյուր տեսակի համար մշտական է (մարդկանցը 24 խրոմոզոմ է): Խրոմոզոմի մեջ գտնվում են գեններ (гены), վորոնք հանդիսանում են ժառանգականության առանձին նշանների կրողները:

Հատկությունների ժառանգումը կատարվում է վորոշ օրենքներով, վորոնք հայտնաբերված են ավստրիական վանական Գրի-

գոր Մենդելի կողմից 1865 թվին: Նա փորձեր էր կատարում սիսեռի վրա՝ նրանց տարբեր տեսակները միմյանց հետ խաչաձևվելով:

Մենդելիի առաջին օրենքը (գերակշռության օրենքը—закон преобладания) ասում է, վոր խառնուրդի առաջին սերնդի մեջ (այսինքն այն գոյակները—особи—վորոնք առաջ են յեկել իրարից վորեւ տարբեր հատկություն ունեցող ծնողներից) յերևան է գալիս միակ մեկ նշանը (գերակշռող նշանը), իսկ մյուսը (տեղի տվողը—рецесивный) գոյություն ունի օրգանիզմի մեջ միայն՝ թաքնված ձևով: Այսպես, որինակ, յեթե խաչաձևվում են (скрещиваются) դեղին և կանաչ սերմեր ունեցող սիսեռները, ապա առաջին սերունդն ունենում է միայն դեղին սերմեր. յեթե խաչաձևվում են յերկու ու կարճ ցողուն ունեցող սիսեռները, ապա առաջին սերունդն ստացվում է միայն յերկար ցողունով: Հետևապես, սիսեռի այնպիսի հատկությունները, ինչպիսին են դեղին սերմերն ու յերկար ցողունները, հանդիսանում են գերակշռող (доминирующий) հատկություններ: Իսկ այնպիսի հատկությունները, ինչպիսին են սերմերի կանաչ գույնն ու կարճ ցողունը, գրանք տեղի տվող նշաններ են:

Մենդելիի յերկրորդ օրենքը (անջատման օրենքը—расщепление) վորոշում է, վոր յերկրորդ սերնդի մեջ յերկու նշաններն էլ յերևան են գալիս, թե գերակշռող և թե տեղի տվողը: Միայն՝ այդ հայտնաբերումը կատարվում է այնպիսի հարաբերությամբ՝ ինչպես 3:1. այսինքն՝ յերկրորդ սերնդի $\frac{1}{4}$ մասը կունենա տեղի տվող նշանը՝ իսկ $\frac{3}{4}$ մասը՝ գերակշռող նշանը: Այդ $\frac{1}{4}$ մասը հետագայում այլևս անջատման չի յենթարկվում և նրանից առաջ յեկող հետագա սերունդները բոլորն էլ պահպանում են թաքնվող նշանը:

Իսկ ինչ վերաբերում է այդ յերկրորդ սերնդի գերակշռող ձևերին, վորոնք կազմում են ամբողջի $\frac{3}{4}$ մասը, ապա նրանցից $\frac{1}{3}$ մասը հետագայում (ուրեմն ամբողջ քանակության $\frac{1}{4}$ մասը) նույնպես անջատման չի յենթարկվում այլևս, այսինքն՝ հետագա սերունդները, վոր առաջ են գալիս այդ $\frac{1}{3}$ -ից, պահպանում են գերակշռող նշանը: Այսպիսով յերկրորդ սերնդի կեսը շարունակաբար կտա մեկ նշանով սերունդներ ($\frac{1}{4}$ -ը գերակշռող նշանով $\frac{1}{4}$ -ը տեղի տվող նշանով), իսկ մնացած կեսը (վորը կազմում է գերակշռող ձևի $\frac{2}{3}$ մասը) իր հետագա սերնդի մեջ յենթարկվում է նույն անջատման, ինչ վոր առաջին սերնդի ժամանակ 3:1—հարաբերությամբ հետագայում նույնը շարունակ կրկնվում է:

Մենդելի յերրորդ (նշանների անկախության կամ գեների անկախ խմբավորման զուգակցության) որենքը կայանում է հետևաբար. — նշանների յուրաքանչյուր զույգ տարրորդման (расщепление) ժամանակ իրեն զգում է ու պահում անյակ, կարծես բացի իրենից ուրիշները գոյություն չունենալին, այսինքն, յերկու տարրեր տեսակների խաչաձևման ժամանակ, յեթե վերջիններն իրարից զանազանվում են շատ ուրիշ հատկություններով, ապա՝ տարրորդման կամ անջատման դեպքում (սկսած խառնուրդի յերկրորդ սերնդից) յերկրնորական (альтернативный) նշանների ժառանգված տարրեր զույգերն անկախ մյուս զույգերից, հետևելով են հաջորդականության այն ֆորմուլային, վոր վերևը նկարագրեցինք:

Որինակ, յեթե խաչաձևենք կարմիր սերմեր և յերկար ցողուն ունեցող սխեռները՝ սպիտակ սերմեր և կարճ ցողուն ունեցող սխեռի հետ, ապա յերկրորդ սերնդի տարրորդման ժամանակ ստացվում են այդ չորս նշանների շատ բազմապիսի կոմբինացիաներ: Բայց յեթե մենք հաշվի առնենք յուրաքանչյուր առանձին նշանի հայտնաբերման հաճախակիությունը (частота), ապա կտեսնենք, վոր յերկրնորական նշանների յուրաքանչյուր զույգն ընթանում է Մենդելի յերկրորդ որենքի ժամանակ հիշված հարաբերությամբ:

Մենդելի որենքի կիրառման սահմանները շատ ընդարձակ են: Նրանք տարածվում են վոչ միայն որդանիզմի արտաքին նշանների վրա (ձևի, գույնի և նման բաների), այլ և նրա բիոքիմիական, բնախոսական և ախտաբանական (патологические) հատկությունների վրա: Դիտողությունները ցույց են տվել, վոր մարդու աչքերի մուր գույները (մոխրագույն, թուխ) գերակշռող գույներ են, իսկ աչքերի բաց գույնը՝ տեղի տվող: Ժառանգական հիվանդությունների մեջ հավկուրությունը (куриная слепота), շաքարախտը (сахарная болезнь) և բախտը (рахит) հանդիսանում են վորպես գերակշռող նշաններ. իսկ ընկճավորությունը (эпилепсия), անգարը (мигрень) և ուրիշները՝ տեղի տվող:

Մենդելի որենքները բացատրում են նաև հետնորդների մեջ հեռավոր նախորդների հատկությունների յերևան գալը. բայց ի նկատի ունենալով, վոր յուրաքանչյուր գոյակի (особа) նախորդների թիվը յուրաքանչյուր հաջորդ սերնդի համար ընթանում է յերկրաչափական առաջատվությամբ (2, 4, 8, 16, 32 և այլն, տասերորդ սերնդում հասնելով մինչև 1024-ի) ապա և հասկանալի յե նախորդների հատկությունները ժառանգելու խնդրի բարդությունը:

Ժառանգականության տեսակետից հանճարեղությունը հաճախ բնածին հատկություն է: Տարբեր նախորդների մեջ ցրված մի շարք հատկություններ պետք է համախմբվեն մեկ եկզեմպլարի մեջ, կազմելով այդպիսով, մի բախտավոր կոմբինացիա: Բայց դրա հետ միասին՝ չպետք է մոռանալ այն հանգամանքը, վոր ժառանգված նախադրյալները եյակի մեջ վորպես հանճար յերևան գալու համար պայմանավորված են նրանով, թե ինչպես են նրանք հետագայում ոգտագործվում կամ ինչ պայմաններում են դրվում նրանք: Ահա այստեղ է, վոր սոցիալական միջավայրը վճռական դեր է խաղում:

Յեվգենիկա. (Евгеника)

Ժառանգականության մեխանիզմի հայտնաբերումով առաջ է քաշվում մարդկային ցեղի ազնվացման և կատարելագործման խնդիրը՝ հիմնված այդ նույն որենքի վրա: Այդպես է ծագել Յեվգենիկան (մարդկային ցեղի ազնվացման գիտությունը):

Յեվգենիկայի հիմնադիրը, Ֆ. Գալտոնը, ժառանգականության տեսակետից ուշադիր ուսումնասիրություն է յենթարկել 300-ից ավելի ընտանիք, վորոնք ունեցել են իրենց մեջ 1000-ից ավելի աչքի ընկնող մարդիկ: Իր ուսումնասիրությունների հիման վրա Գալտոնը գալիս է այն յեզրակացության, վոր մտածված ամուսնությունների միջոցով, մի շարք սերնդների ընթացքում, հնարավոր է բարձր հատկություններով ոժտված մարդկային ցեղ առաջացնել:

Յեվգենիկայի խնդիրն այն է, թե ժառանգականության յերկվություններն ուսումնասիրելու շնորհիվ ինչպես պետք է առաջացնել ֆիզիկապես ամուր և մտավորապես ուժեղ ազգություն. ինչպիսի ամուսնական որենքներ պետք է գոյություն ունենան, ինչպես թուլացնել կամ մեղմացնել այն արտաքին ազդեցությունները, վորոնք վատացնում են մարդկային ցեղը և ընդհակառակը՝ ուժեղացնել այն ազդեցությունները, վորոնք ազնվացնում են նրան:

Ֆիզիկական և հոգեկան շատ հատկություններ վորսանցվում են նախադրյալների (задатков) կամ ժառանգական նախատրամադրությունների (предрасположении) ձևով: Յեվ անհատի ապրելիք միջավայրից և կախված այդ նախադրյալների կամ նախատրամադրությունների խեղդվելու կամ զարգանալու բախտը:

Ժառանգած բնածին հատկությունները կարող են բոլորովին յերևան չգալ, յեթե շրջապատող միջավայրի մեջ չկան համապա-

տասխան խթաններ, վորոնք կարողանային շարժողության մեջ դնել նրանց: Միջավայրը մարդու ինքնությունը ձևակերպում է բնածին տվյալների հիման վրա: Յերեխայի մասին խոսել առանց նրա միջավայրն ի նկատի ունենալու, դա նշանակում է խոսել վերացական մի բանի մասին, վորը գոյություն չունի իրականության մեջ:

Այս կամ այն ֆիզիկական և սոցիալական միջավայրից դուրս մարդը գոյություն չունի: Այնպես, ինչպես մի ֆիզիկական գոյություն չի կարող առանց օդի և կերակրի գոյություն ունենալ, վորը նա ձեռք է բերում շրջապատող միջավայրից, այնպես էլ մարդու ինքնությունն անըմբռնելի յի առանց հասարակության, վորից նա ստանում է իր հոգեկան բովանդակությունը: Մեզ կենդանացնող, վոգևորող մտքերն ու գաղափարներն ստացվում են ընդհանուր շրջապատող մթնոլորտից և վերստին անդրադառնում այնտեղ այնպես, ինչպես այն օդը, վոր թռքերով ներշնչում ու արտաշնչում ենք:

Ռուսոսն սխալվում է, յերբ ասում է՝ եմիլլե պետք է դաստիարակվի սոցիալական միջավայրից դուրս՝ հասարակությունից հեռու:

Այն, ինչ վոր մեզնից ամեն մեկը ձեռք է բերում անկախ ուրիշներից, կազմում է մի շատ չնչին մասը համեմատած այն բոլորի հետ, վոր ձեռք է բերվում հասարակության հետ շփման մեջ լինելով: Ինքնությունը վերջին հաշվով արդյունք է միջավայրի. իսկ վերջինս ձևակերպող բաղձաթիվ ու անհաշիվ տարբերի մեջ յուրաքանչյուր անհատ ել իր հերթին ունի իր բաժինը:

Յերեխայի վարք ու բարքի (поведение) ձևերը, նրա սովորությունները, հետաքրքրությունները, գնահատականները, ճաշակը և այլն կազմակերպվում են շրջապատող միջավայրի ազդեցության տակ: «Միջավայրը,—ասում է պրոֆ. Մ. Ն. Պակրովսկին,—այն արձանագործն է, վորը միևնույն նյութից ստեղծում է զանազան մարդկանց»: Նա զրովագում է (чеканит) անհատականություններ այնպես, ինչպես փողի մեքենան փող է կտրում», այդ իսկ պատճառով, յերեխային հասկանալու համար, անհրաժեշտ է ուսումնասիրել նրան շրջապատող միջավայրը:

Միջավայրի ազդեցության մասին խոսելիս մենք տարբերում ենք ֆիզիկական (յերկրի յեղանակը, նրա բելիյեֆը, բնական հարստությունները և այլն) և սոցիալական միջավայրը (անտեսական, հասարակա-քաղաքական, պրոֆեսիոնալ-աշխատանքային, կենցաղային և կուլտուրական պայմանները): Բայց այդ ձևական տար-

բերությունը հիմք չպիտի ծառայի բացասելու նրանց մեջ յեղած սերտ կապը. մի կողմից բնական արտադրական ուժերը պայմանավորում են յերկրի բնակչության աշխատանքային գործունեյությունը, մյուս կողմից սոցիալական գործոնը փոփոխում է բնական պայմանները, վորովհետև մարդը վոչ թե պատիվ կերպով է հարմարվում շրջապատող բնությանը (ինչպես անասունները), այլ ակտիվ կերպով բնության ուժերը հարմարեցնում է իր կարիքներին, կերպարանափոխելով նույն իսկ ցամաքի դեմքը: Մանավանդ այնպիսի առարկաներ, ինչպիսին են ուտելիքը, հագուստը, բնակարանը և ընդհանրապես կյանքի սանիտարա-առողջապահական պայմանները, կարող են վերադրվել նաև ֆիզիկական միջավայրին, բայց ավելի շատ, իհարկե, սոցիալական միջավայրին:

Կարելի յի տարբերել նաև բնական միջավայր (այսինքն շրջապատող այն բոլոր ազդեցությունները, վորոնք ներգործում են յերեխայի վրա չնախամտածված և անկամ կերպով) և արհեստական միջավայր (դաստիարակության բնագավառը բառի լայն իմաստով. յերբ նախամտածված կերպով ստեղծվում է ներգործման սխառմը—դպրոց, մանկապարտեզ, մանկական ներկայացումներ, թատրոններ և այլն): Միջավայրն անընդհատ աղդում է մարդու վրա՝ նրա ամբողջ կյանքի ընթացքում. իսկ այդ ազդեցությունը յերեխայի վրա սկսվում է դեռ նրա ծնվելուց առաջ: Այդ շրջանում արդեն նշանակալից են դառնում այն պայմանները, վորոնց մեջ ապրում է մայրն իր հղության շրջանում:

Ծնվելուն պես մարդն սկսում է զարգանալ, այսինքն ժամանակի ընթացքում նա ձեռք է բերում լավ և ճիշտ զարգացած վոդնաշար, ընդարձակ թոքեր, ուժեղ մկաններ և դիմացկուն նյարդային համակարգություն: Բայց այս բոլորը բնատուր չէ: Բնությունը տալիս է միայն այս կամ այն զրական կամ բացասական նախադրյալները:

Այսպիսով բոլոր թված հատկություններն անհատի որդանիդմի մեջ պետք է մշակվեն համապատասխան գործունեյության և վարժությունների միջոցով:

Զարգացման ընթացքում վորեւ անձնություն կարող է աճող որդանիդմին պատճառել անուղղելի վնաս: Իսկ այդ անձը՝ տուրյուններն ամենից շատ արդյունք են շրջապատող անբարենպաստ միջավայրի:

Ամենից առաջ անհրաժեշտ է կանոնավոր սնունդ: Յուրաքանչյուր հասակ և մարմնի յուրաքանչյուր մասը կարիք ունի հատուկ սննդի (որ. վոսկորների հյուսվածքը կարիք ունի զանա-

զան հանքային աղերի, ուղեղային բջիջները ալիտակուցային նյութերի և այլն): Յուրաքանչյուր տարիքի համար գոյութիւն ունի սննդանյութի վորոշ նորմա: Սննդի անբավարար քանակութիւնն ու վատ հատկութիւնը կարող են որդանիզմի կորուստյան պատճառ դառնալ, մեղցնելով նրա ֆիզիկական ու հոգեկան ուժերը, դարձնելով յերեխային թուլակազմ և տխրդ (мало-успевающий): Նույնպիսի կործանարար ազդեցութիւն կարող է ունենալ նաև թթվածնային սովը (այսինքն՝ մաքուր և թարմ ոդի պակասութիւնը): Միջավայրից և կախված նաև այն հանգամանքը, թե արդյոք յուրաքանչյուր գործարան պաշտպանվում և վերահաս վնասներէից, արդեօք յուրաքանչյուր սկզբնավորող ֆունկցիա (функция) ստանում է անհրաժեշտ զարգացում և աճող որդանիզմի եներգիան արդյոք համաձայն նրա ուժունակութեան և ծախսվում:

Այդ ուղղութեամբ ել շատ վտանգներ գոյութիւն ունեն և յերեխն հետեանքներն անուղղելի յեն լինում, յերեխան կամ անդամալուծ է դառնում ամբողջ կյանքի ընթացքում, կամ իր ուժերից վեր աշխատանքի պատճառով, որդանիզմը վաղաժամ հյուծման է մատնվում:

Ամենից առաջ՝ շրջապատող միջավայրի պայմաններէից և կախված մանկական հասարակութեան կենսական ընդունակութիւնները: Յերեխաների մահացութեան տոկոսը կախված է վոչ այնքան աննպաստ ժառանգականութիւնից, վորքան սոցիալական միջավայրից, հասարակութեան տնտեսական բարենպաստ վիճակից: Կյանքի համար ի ծնե անընդունակ յերեխաները նյութապես ապահով պայմաններում կարողանում են ապրել, այն ինչ՝ ավելի ուժեղ ու կյանքի համար ընդունակ մանկական որդանիզմները հաճախ վաղաժամ զրկանքների դաժան պայմաններում կորչում են: Վիճակագրութիւնը ցույց է տալիս, վոր կապիտալիստական յերկրներում բանվորների յերեխաների մեջ մահացութեան տոկոսը շատ ավելի մեծ է: Ահագին ազդեցութիւն ունի միջավայրը նաև մանկական հանցագործութեան տեսակետից:

Յերեխան չափազանց յենթակա յե ուրիշների ազդեցութեանը. նա հեշտութեամբ է վարակվում հոռի ուրինակներով: Առանձնապես կարեքն ու աղքատութիւնը մղում են նրան դեպի հանցագործութիւն: Վիճակագրութիւնը ցույց է տալիս, վոր շուկայում հացի արժեքի բարձրացման հետ միասին՝ աճում են նաև մանկական հանցագործութիւնները: Նկատված է նույնպէս, վոր մանկական հանցագործութիւնն ավելի յե ծախսվում և ուժեղա-

նում նաև սովի ու տնտեսական քայքայման տարիներում, ինչպէս և իմպերիալիստական պատերազմի ու քաղաքացիական կռիւների շրջանում: Պատանի հանցագործների սոցիալական կազմը բաղկացած է գլխավորապէս հասարակութեան ամենաաղքատ դասի յերեխաներից, մանավանդ աղքատների, Էափառաշրջիկների, պոռնիկների յերեխաներից և ծնողազուրկ վորերից:

Մանկական հանցագործութեան վրա ազդող գործոններից մեկն է հանդիսանում նաև ժամանակակից մեծ քաղաքի կյանքը, իր գայթակղեցնող կողմերով. ուրախ ժամանցների զանազան հիմնարկութիւնները, կինոները, քաղցրեղենները, փայլն ու շուքը, վորոնք արթնացնում են մանկան մեջ բավականութեան ուժեղ ցանկութիւն:

Չի կարելի բացասել միջավայրի դերը նաև մանկան պակասավորութեան (дефективность) և մտավոր հետամնացութեան առաջանալու խնդրում:

Սոցիալ-տնտեսական պայմանները Չփավորի յերեխան. բախտորոշ կերպով ազդում են յերեխայի՝ ինչպէս ֆիզիկական՝ նույնպէս և հոգեկան զարգացման վրա: Աճման (рост), կշռի, կրծքի վանդակի և թոքերի ծաւալի, ֆիզիկական ուժի, նույնպէս և մտավոր զարգացման տեսակետից, չունեն որդասի յերեխաները յետ են մնում իրենց հասակակից ունեւոր դասի յերեխաներից:

Անբավարար սնունդը, տխուր ու նեղվածք բնակարանները, նեխված ու խոնավ ոդը, կեղտը, վատ հագուստը, քնի աննորմալ պայմանները, ուժից վեր աշխատանքի հետեանքով վաղաժամ ուժասպառ լինելը, այս բոլորը կործանարար կերպով են տնդրադառնում չքավոր դասի յերեխաների մարմնական և հոգեկան առողջութեան վրա:

Գյուղացու յերեխան.

Այն մարդը, վորի մանկութիւնն անցել է մեծ քաղաքում, տարբերվում է գյուղում մեծացած մարդուց: Գյուղն իր կյանքի դանդաղ թափով (темпом), համեմատաբար միորինակ տպավորութիւններով, բնութեանը մոտ լինելով, հասարակական պարզ փոխհարաբերութիւններով՝ սուր կոնտրաստ է կազմում մեծ քաղաքի վերաբերմամբ, վորն աչքի յե ընկնում իր կյանքի տենդոտ թափով, նյարդային համակարգութիւնը գրգռող տպավորութիւնների բազմազանութեամբ, տեխնիկայի հրաշքներով և քաղաքի կյանքը բնորոշող հասարակական չափազանց բարդ փոխհարաբերութեամբ: Պարզ և ռւբնի, վոր գյուղական յերեխայի թե մարմինը, թե նրա մտավոր պաշարը, թե նրա

հուղական կամային բնավորութիւնը (эмоционально волевой характер) ունեն իրանց առանձնահատկութիւնները, համեմատած քաղաքի յերեխաների հետ:

Պրոֆեսոր Զալկինդը տալիս է գյուղական յերեխայի հետեւյալ բնութագիրը. «Գյուղացու յերեխան մշտապես գտնվում է իր ծնողների առանձնացրած (իր բակը, իր արտը) աշխատանքային ակտիվութեան անմիջական միջավայրում, վոր է յերեխայի համար բախտորոշ գեր է խաղում: Գյուղացու յերեխաները, վորոնք շարունակ գտնվում են ծնողների ծանր, նախնական և մեկուսացած աշխատանքի միջոցառում, շատ վաղ են հարկադրվում մանր, նախնական և առողջա ոգնութիւն ցույց տալ իրենց ծրնողներին: Այդ հանգամանքը շատ շուտ է ձեւավորում նրանց աշխատանքային ունակութիւնները և միաժամանակ շատ վաղ եւ ստեղծում է նրանց մեջ մանր, ներամիտի աշխատանքային մտահոգութիւն և աշխատանքի նրանց սոցիալական աշխատանքային հորիզոններն ազդեցութեւն են:

Զնայելով վոր գյուղացի յերեխան ավելի վաղ է անցնում աշխատանքային ակտիվ պրոցեսին, քան բանվորական միջավայրի յերեխան, այնուամենայնիվ նրա ինքնուրույնութիւնն ավելի ուշ է զարգանում, վորովհետեւ նա գտնվում է ակտիվութեան ավելի սահմանափակ շրջապատում: Այստեղից եւ բխում է մեծերի յերեխանի զեկավարութեան կարիքը և այդ զեկավարութեանն ավելի դուրին յենթարկվելու յերեւոյթը:

Քաղաքի յերեխաների մեջ բանվորի յերեխաներն ունեն ակնբախ և ելական տարբերութիւն՝ բուրժուազիայի յերեխաներից, շնորհիվ նրանց դաստիարակող միջավայրի տարբերութեան: Կապիտալիստական հասարակութեան մեջ պրոլետարական ընտանիքը քայքայված է գործարանային աշխատանքով. մայրը, վորը ստիպված է աշխատել գործարանում, կտրված է յերեխաներից, վորոնք իրանց հերթին զրկված են ընտանեկան հարմարութիւններից և ծնողական փայփայանքներից. և վորովհետեւ նրանց համար բացակայում են սոցիալական դաստիարակութեան հիմնարկներ, ուստի և նրանք մնում են լքված ու առանց հսկողութեան: Այդ պատճառով եւ նրանց մեջ մահացութեան, հանցագործութեան, մտավոր հետամնացութեան տեղում բարձր է: Պրոլետարի յերեխայի մարմնի շինվածքը (конституция) ավելի ցածրորակ է, քան բուրժուական դասակարգին պատկանող յերեխայինը: Յեւ այդ այն պատճառով, վոր նախ նա զեւ իր մոր արգանդում իսկ քաղցի յե դատապարտված և յերկ-

րորդ՝ նա ծնվելուց հետո յեւ չի գտնվում բարենպաստ պայմաններում:—ապրում է ձեղնահարկերում (на чердаках) կամ գործարանային բարակներում: Կոպիտ վերաբերմունքը, նվաստացումը և վիրավորանքը հետեւում են նրան յուրաքանչյուր քայլափոխում: Վատուժ, նիհար և ընկճված պրոլետարական յերեխան շատ վաղ է սկսում թշնամական զգացմունք տածել դեպի շրջապատող կապիտալիստական աշխարհը և նրա մեջ արթնանում է դասակարգային ինքնագիտակցութիւնը. նա կոլլեկտիվիստ է: Մինչդեռ, ծնված որից հոգատուութեամբ ու փայփայանքով շրջապատված, ֆիզիկապես ավելի ուժեղ, մտավորապես ավելի զարգացած բուրժուական յերեխան՝ ինքնակոլլեկտիվիստ է:

Քաղաքի պրոլետարի յերեխայի առանձնատուկ գծերից կարելի յե նշել նաև նրանց ունեցած լուրջ ու ուսալ վերաբերմունքը դեպի կյանքը, նրանց ինքնուրույնութիւնը, մեծերի զեկավարութեանից կտրվելը, նախաձեռնութիւնը, համարձակութիւնն ու վճռականութիւնը:

Ամփոփենք մեր ասածները, կենդանի Ամփոփումն. որգանիզմը մարդու թղթի թերթ, չն, վորի վրա կարելի յե ուղած ձևերը դնել, այլ

նա բնութիւնից ոժտված է ժառանգական կառուցվածային ու ֆունկցիոնել տվյալներով, բայց նրա մեջ թաղնված հնարավորութիւնները կարող են զարգանալ միայն արտաքին խթանների շնորհիվ, վորոնք շարժողութեան մեջ են դնում նրա մեջ ներհող նախադրյալները: Միջավայրը՝ դա զորավոր գործոնների համադրութիւնն է:

Յեթե ժառանգականութիւնը կրկնել է տալիս նախորդների հատկութիւնները, հետեւապես նա պահպանողական ֆակտոր է (գործոն է), վորը ձգտում է պահպանել անցյալը. իսկ միջավայրը, ընդհակառակը, հառաջագիմող գործոն է, վորը ձեւափոխում է որգանիզմի թե կառուցվածքը և թե ֆունկցիան, տանելով նրանց դեպի հետագա զարգացումն ու նոր հնարավորութիւնները: Մարդու անձնավորութիւնը ժառանգականութեան և միջավայրի փոխազդեցութեան արդիւնք է:

Կյանքի պայմանների ազդեցութեան տակ մարդկային որգանիզմի և մարդու ինքնութեան փոփոխութիւնը հաստատվում է բազմաթիվ փաստերով: Այստեղից եւ բնականորեն բխում է հետեւյալը. — խթաններից վորոշ տեսակները փոխաբերելով ուրիշներով ստեղծվում է արհեստական միջավայր, վորով և կարողանում ենք կանոնավորել մանկան զարգացումը, այն է՝ կատարելազործում ենք նախադրյալներից մեզ համար պետք յեղողը և վոչնչացնում մյուսները:

Հ Ա Ր Յ Ե Ր

1) Ի՞նչ տեսակետ ունին նատիվիզմը, ևմալիրիզմը կոնվերգենցիան (զուգակցության տեսութիւնը) և խորհրդային մանկաբանութիւնը՝ յերեխայի զարգացումը պայմանավորող գործոնների վերաբերմամբ:

2) Ի՞նչպիսի վիճաբանութիւններ գոյութիւն ունեն կենսաբանության մեջ՝ ստացական հատկութիւնները ժառանգականորեն անցնելու մասին:

3) Ժառանգման ինչպիսի մեխանիզմ գոյութիւն ունի և վերջան ընդարձակ և Մենդելի որեւքների կիրառման ընդգամումը:

4) Ի՞նչ բան և Յեվգենիկան:

5) Ի՞նչումն և կայանում միջավայրի դերը յերեխայի զարգացման գործում:

6) Տվեք մի կողմից գյուղացու յերեխայի, մյուս կողմից քաղաքի պրոլետարական և բուրժուական յերեխաների համեմատական ընթացքները:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Հետևյալ ծրագրով կատարեցեք հետազոտութիւն սոցիալ-կենցաղային այն պայմանների, վորոնց մեջ ապրում և յերեխան:

1) Ո՞ւմ մոտ և ապրում յերեխան (ծնողների, բարեկամների թե ուրիշների) և կենդանի՝ յեն հայրն ու մայրը:

2) Հոր և ընտանիքի մյուս անդամների արհեստը:

3) Ընտանիքի նյութական կացութիւնը (անդամների աշխատավարձը և ընտանիքի ունեցվածքի վերաբերյալ տեղեկութիւններ):

4) Ընտանիքի կազմը:

5) Բնակարանը (վերջան տեղ և բնութ և քանի հոգի յեն ապրում այնտեղ. բնակարանի վորակութիւնը. — չորութիւն, խոնավութիւն, տաքութիւն, ցլտութիւն, ելեքտրականութիւն թե քարշուղով լուսավորութիւն. ջուր ունի տունը, թե վոչ):

6) Մնունդ (շարտթական քանի անգամ և յերեխան տապա կած միս, կսթ, լուղ գործածում. սնունդը բավարար և արդյոք):

7) Հագուստը և կոշիկները (սեզոնականութիւնը, տաք լինելը, գործածված թե նոր լինելը, սպառման չափը):

8) Առողջապահական պայմանները (վորջան հաճախ և փոխում իր և անկողնու սպիտակեղներ. ուտելուց առաջ լվանում և արդյոք ձեռները, մաքրում և ատամները):

9) Քունը (ժամը քանիսին և քնում և վեր կենում. մահճակալի, սնդուկի, թե հատակի վրա յե քնում):

10) Ընտանիքում նկատվում և արդյոք հարեցողութիւն, կսիվ, ցոփութիւն (разврат):

11) Ընտանիքի վերաբերմունքը դեպի յերեխան (չափազանց խստութիւնը կամ յերես տալը. գործի գնացող ծնողների յերեխան, վոր տանն և մնում, ի՞նչ ուշադրության և արժանանում):

12) Ընտանիքի կուլտուրական մակարդակը. կրթական և հասարակական ի՞նչ պատրաստութիւն ունեն ծնողները և ընտանիքի մյուս անդամները. վերջան վերք կա. ի՞նչ ուղղութիւնը են նրանց բովանդակութիւնը:

13) Քանի յերորդ տարին և սովորում. վերջան և ընդունակ սովորելու. մտւորում, մանկապարտեզում, մանկատնում յեղել և, թե վոչ:

14) Պատիժներ կիրառվում են, թե վոչ, ինչպիսի. վերջան հաճախ և ինչո՞ւ համար:

15) Տան գործին մասնակցում և, թե վոչ (շահելու համար աշխատանքներին մասնակցում և և վեր հասակից. փողոցային առևտրով կամ վորորմութիւն խնդրելով զբաղվում և թե վոչ):

16) Հասարակական կյանքին մանկան մասնակցութիւնը (պիտներ և արդյոք և ի՞նչ ընտրովի պարտականութիւն և տանում):

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Գործոն (фактор)—շարժող, շարժման մեջ գնող պատճառ, գործի մղող:

Կենսաբանութիւն (биология)—գիտութիւն կյանքի որեւքների և յերեւոյթների մասին:

Բիոլոգիական գործոն (биологический фактор)—որգանիզմի իրեն՝ բնական գործունեյության ուժերը:

Տեսութիւն (теория)—ճանաչողական բարդ միտք, վոր բաղկացած և տրամաբանորեն կապակցված դատողութիւններից, յեզրակացութիւններից և հասկացողութիւններից:

Համադրութիւն—զուգակցութիւն (конвергенция)—մի կետում իրար հանդիպելը, միանալը:

Գերակշռող (доминирующий)—տիրապետող, հաղթող:

Անհատ (индивид)—առանձին դեմք, անհատ:

Անհատական (индивидуальный)—անձնական, առանձին, անբաժանելի:

Վիճաբանութիւն (дискусия)—վեճ, մտքերի փոխանակութիւն:

Անեղուկ (рецесивный)—թաքնված նահանջող, տեղի տվող:

Յերկրնորական (альтернативный)—ընտրության ճանապարհներին կանգնած վիճակ, հաջորդող, մեկը մյուսին փոխարինող, փոխադարձաբար միմյանց վանող:

Ախտաբանություն (патоология) — գիտություն հիվանդությունների մասին:

Խթան (стимул) — զրդող շարժող:

Վերացականացում (абстракция) — առարկաների առանձին հատկանիշները նրանցից բաժանելու մտավոր գործողությունը:

Ձևավորել (формировать) — կազմել, ստեղծել, ձև տալ:

Դարգել (тренировать) — սովորեցնել, վարժեցնել:

Պակասավորություն (дефективность) — աննորմալություն՝ իր զանազան ձևերով (մտքի թուլություն, բխամտություն, համբու թուլություն, կուրություն և այլն):

Պրիմիտիվ (примитивный) — նախնական, կոպիտ:

Դասակարգային ինքնադիտակցություն (классовое самосознание) — հասարակական արտադրության մեջ միևնույն տեղը գրավող մարդկանց խմբերի շահերի ընդհանրական դիտակցություն:

Կոլլեկտիվիստ (коллективист) — նա, ով ընդհանուր շահերը իր շահերից բարձր է գերադասում. կողմնակից է միահամուռ ուժերով աշխատելու, վորի ժամանակ յուրաքանչյուրը մտցնում է իր ոգտակարության բաժինը:

Անհատապաշտ (индивидуалист) — նա, ով անձնական շահերը ավելի յե գերադասում, քան հասարակական շահերը. իր անձնական կյանքում հասարակության մասնակցությունը չուզող, բայց նրա բարիքներից ոգավող:

Ռեալիստիկ (реалистический) — ուղղված դեպի նյութական աշխարհը, շոշափելի իրականությունը:

Կառուցվածային (структурный) — վոր վերաբերում է կառուցվածային (սովյալ գեպրում՝ որդանիզմի):

Գործառնական (функциональный) — վոր վերաբերում է մի վորոշ և տեական վիճակով կատարվող գործողությունների ամբողջությունը, պաշտոն:

Պահպանողական (консервативный) — հինը պահպանող. գոյություն ունեցող կարգերից չհրաժարվող:

Առաջատվություն (прогрессивный) — առաջխաղացում՝ վորոշ որենքներով, որինակ՝ 1, 2, 4, 6, 8... և այլն. — կամ՝ 2, 4, 8, 16, 32, 64... և այլն:

Սույն առաջադրությունն ավելի խորացնել ցանկացողների համար ուսուցիչներին իմացողներին հանձնարարվում է հետևյալ գրականությունը. —

Ю. Филиппенко — Наследственность. Киркпатрик — Основы педологии, 15-ая глава. О. Рюле — Пролетарское дитя. Н. Рыбников — Деревенский школьник. С. Аркан — Социальная природа ребенка. В. Шульгин — Основные вопросы социального воспитания.

